

# ՄԱՔՐՆՈՒԹԻՒՆ

Չարժեր բնակիլ այն քաղաքը, ուր օրէնք կամ օրինապահ դատաւոր չկայ, որոպիսեան ուր որ օրէնք չկայ մարդիկ անօրէն կ'ըլլան եւ ո՞վ կարող է անօրէններու մէջ անվնաս մնալ. կամ եթէ օրէնք ըլլայ, բայց դատաւորը օրէնքի հրամանները չգործադրէ, գրկուածը ո՞ւր պիտի դիմէ իրաւունք փնտոյնու, որոպիսեան այդպիսիները օրէնքի ջատագովքը են, բայց իբրեւ անօրէն կը վարուին եւ օրէնքը կեղծելով կը կեղծեն նաեւ քաղաքն ու հասարակութիւնը:

Հասարակութեան վերաբերող օրէնքները կամ բարեկարգութիւնները ամէնուրեք հաւանութեամբ պիտի հաստատուին:

Գործի ոչ մէկ վնիռ չի կրնար հաստատուն մնալ, եթէ իրաւունքի վրայ հիմնուած չըլլայ: Ուստի երբ մարդիկ, իրար հետ համաձայնելով, կը վնոնեն իրենց վերաբերող որեւէ գործ ընել, վերջը անհամաձայն գտնուելով իրար հետ վնիռը ի գուր կը դառնայ, եթէ իրաւունքով չէ հաստատուած:

Եթէ մարդն իր ընկերոջ հետ աննենգ ու խաղաղ ապրէր, դատաւոր ու դատատան աւերող կ'ըլլային, եւ այն ատեն ոչ ոքի միջեւ վէճ կը ծագէր եւ ոչ ոք դատի երթալու կարիք կ'ունենար, որոպիսեան դատաւորը մարդկանց խաղաղութեան ու անիրաւութեան պատճառով սահմանուեցաւ, որպէսզի եթէ մարդիկ իրարու հանդէպ անիրաւ ըլլան, դատաւորը իրաւունք հաստատէ:

Արդարութիւնը կը սուկայ, երբ դատաւորը՝ որ իրաւունքի պահպանն է՝ կը հայածէ զինք եւ հակառակ որ անկէ գրկուած է՝ իրաւունք կը խնդրէ:

Շարունակելի

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԼԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

### ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

#### ԳԱՒԱԹ ԳԱՐՉՆԵԼ

Ոգին կը ստիպէր կնոջ՝ սարսափելի յիմարուծիւններ խօսելու, եւ իրեն այնպէս կը թուէր՝ թէ իր սրտէն կը բխին այդ խօսքերը: Անգամ մը այդ տանջանքներուն մէջ ըսաւ. «Եթէ սրտիս մէջ որեւէ գէշ բան գտնէք՝ ատիկա Սատանան՝ դրեր է, ես այդպիսին չեմ»: Այս խօսքերէն ետք գաւաթը հանգստացաւ...:

Ի վերջոյ անոնք հասկցան, որ Սատանային հետ կապի մէջ եղած են, եւ սկիզբէն ի վեր խաբուած են: Հրաժարեցան այդ բոլորէն: Հետաքրքրական է, որ այդ պահէն սկսեալ բնակարանը լեցուեցաւ որոշ տհաճ հոտերով, եւ ստիպուած եղան փոխելու իրենց ճերմակեղէնը: Յաջորդ օր նոյնպէս փոխեցին բոլոր սպասները, որովհետեւ կարելի չէր զանոնք գործածել: Քանի մը օր ետք կինը դիւահարեցաւ: Սարսափելիօրէն վախցած՝ անիկա բացականչեց. «Յիսու՛ս, Դաւիթի՛ Որդի, ողորմէ՛ ինձի»: Ատոր վրայ դեւերը իսկոյն անհետացան: Հիմա ամուսինները կ'ըսեն, որ ազատած են Սատանայէն:

Ահա թէ ո՛րքան «անմեղ» զբաղում է գաւաթ դարձնելը:

Ոգեհարցութեամբ զբաղողներուն սարսափելի բաներ կը պատահին: Երիտասարդ բուժբոյր մը կը գրէ. «Անգամ մը երիտասարդ մը կը խնամէի, որ երկար ատեն ոգեհարցութեամբ զբաղած էր: ...»

Շարունակելի

## ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՐԽ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՐԽ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 30 ԴԵՎՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 53

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 22.24-30**

### Զ.ՅԻՍԱԿԻ

Աշակերտներուն մէջ վէճ ծագեցաւ թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ.

«Ազգերու թագաւորները կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը. սեղան բազմո՞ղը թէ սպասաւորը: Անշուշտ որ սեղան բազմողը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս մնացիք փորձուծիւններու ընթացքին, եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզ, ինչպէս հայրս ինձի տալ խոստացաւ: Իմ թագաւորութեանս մէջ իմ սեղանէս պիտի ուտէք ու խմէք եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը:

### ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ ԿԸ ՓՈԽԷ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

Կը պատմուի թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձեալ կու գայ եւ ինքզինք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտէզի մը մէջ նստած երբ Սուրբ Գիրք կը կարդար, Ամերիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դու՛ն, ո՞վ Ափրիկեցի, դո՞ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ Ափրիկեցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ փաշա եղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կրնայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Անիկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՍՐԲՈՑ ՈՐԴԻՆՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ՝  
ՅԱԿՈՐԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ  
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆՁԻՆ**

### Յակորոս Առաքեալ

Ձեբեղիոսի եւ Սողոմէի որդին՝ Յակորոս, իր եղբորը Յովհաննէսի եւ Պետրոսի հետ կը կազմէին այն սեղմ շրջանակը, որու աւելիով կը վստահէր Քրիստոս:

Յակորոս եւ Յովհաննէս իրենց ըմբոստ նկարագրին համար Քրիստոսի կողմէ կոչուեցան «Որդիք Որոտման»:

Յակորոս առաքեալի նահատակութեան կ'անդրադառնայ միայն Գործք Առաքելոց գիրքը, երբ կը պատմէ թէ Հերովդէս ձերբակալելով կը գլխատէ գայն՝ շուրջ 99 թուականին Երուսաղէմի մէջ:

Յակորոս կը հանդիսանայ առաջին նահատակը առաքեալներու խումբին: Աւանդութիւնը կ'ըսէ թէ իր մարմինը կը նետուի Եաֆայի ծովը եւ ալիքները գայն կը հանեն Սպանիոյ ծովեզերքը, ուր մեծ ժողովրդականութիւն կ'ունենայ: Իսկ անոր գլուխը կը տարուի Յակորոս Տեառնեղբայր առաքեալին, որ կը թաղէ գայն իր պարտէզին մէջ, որու վրայ ապագային կը կառուցուի Երուսաղէմի հայոց Ս. Յակորեանց հիանալի եկեղեցին:

## Յովհաննէս Առաքեալ

Առաքեալներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ ճանչցուած է «Սիրելի Աշակերտ» անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակորոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի երեքամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ, եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախնալով կը լքեն զՔրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրոյն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի խնամքին եւ այդպիսով կ'աւանդէ իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծանօթ է իր անունը կրող սքանչելի աւետարանով՝ «Աւետարան Ըստ Յովհաննու»: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա աքսորեալ կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են «Յայտնութիւն Յովհաննու» գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելադրէ կեանքը ապրելի ճշմարտութեամբ ու սիրով:

Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ 100 թուականին Քրիստոսի:

**ՀՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ**

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

#### ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

**ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**  
Խոստովանութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ բարիք եւ պարգեւ, նաեւ հոգիի կենդանութիւն եւ բժշկութիւնն է: Շատեր տգիտութեան հետեւանքով յիմարաբար կորսուած են մեղքերու մէջ եւ զրկած են իրենց անձերը խոստովանութեան շնորհէն: Բազմաթիւ են անոնք որոնք առանց խոստովանութեան ու հաղորդութեան կը մնան. ոմանք՝ որովհետեւ չեն գիտեր խոստովանութեան շնորհքն ու բարիքը. ուրիշներ՝ ամչնալուն եւ վախնալուն համար չեն խոստովանիր. իսկ ուրիշներ՝ որովհետեւ ընկղմած ու կորսուած են մեղքերու մէջ, չեն ուզեր ազատիլ սատանայի ծառայութենէն:

Արդ, մի՛ անգիտանաք. խոստովանութիւնը բժշկութիւնն է հոգիներու համար, փախուստ է դժոխքէն, ազատութիւն է սատանայէն եւ յարութիւն է մահէն: Հետեւաբար, կը պատուիրենք որ ամէն Կիրակի եկեղեցւոյ դուռը երթաք եւ խոստովանիք: Քահանային ներկայութեան ձեռքով փոքր վախով ու ամօթով կը փրկուիք այն մեծ ամօթէն որ տիեզերական ահեղ հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ, այն մեծ Կիրակին որ անփոխարինելի է՝ երբ մարդոց բոլոր ծածուկ ու գաղտնի գործերը պիտի յայտնուին:

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

### ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄ ՄԸ

Նեղութեան օրը ինձի կանչէ, ես քեզ պիտի ազատեմ ու դուն զիս պիտի փառաւորես: (Մաղկ. 50.15):

Ասիկա իսկապէս պատուական խոստում մըն է:

Ահաւասիկ նեղ եւ ստիպողական պարագայ մը, «նեղութեան օրը»: Այսպիսի օրուան մը կէսօրն անգամ մուտք է եւ իւրաքանչիւր անցնող ժամ նախորդէն աւելի մուտք կը թուի: Ու այս խոստումը ճիշդ այսպիսի մուտք ու ամպոտ օրուան մը համար է:

Ահաւասիկ քաջալերիչ խրատ մը. «Ինձի կանչէ»: Ասիկա ընելու համար յորդորի պէտք չունիք, ասիկա մեզի բնութիւնը ըլլալու է, Անոր կանչել ամէն օր եւ օրուան որեւէ ժամուն: Ի՛նչ մեծ ողորմութիւնն է Աստուծոյ կանչելու արտօնութիւնը ունենալ եւ ի՛նչ մեծ իմաստութիւնն է այդ արտօնութիւնը լաւագոյնս գործածելով մեծագոյն չափով անկէ օգտուիլ: Ի՛նչ յիմարութիւնն է «Նեղութեան օրը» մարդոց դիմել: Տէրը կը հրաւիրէ մեզ որ մեր խնդրանքները իրեն տանինք եւ իր առջեւ պարզենք: Մենք պիտի ընդունինք այս հրաւերը եւ պիտի չուշանանք այսպէս ընելու:

Ահաւասիկ մեծ խոստում մը՝ «Ես քեզ պիտի ազատեմ»: Ինչ որ ալ ըլլայ քու դժուարութիւնը, Աստուծոյ համար բնաւ տարբերութիւն չընենք եւ Անոր քով ոչինչ կայ անկարելի, խոստումը միշտ նոյնն է, ապահով եւ ուրախ ազատութիւն՝ անձամբ իր ձեռքովը գործուած: Հաւատանք իրեն, ու Ան պիտի պատուէ մեր հաւատքը:

Ահաւասիկ սքանչելի վերջաւորութիւն մը. «դուն զիս պիտի փառաւորես»: Քու ակնկալածէդ շատ աւելի գոհ պիտի մնաս քու աղաղակէդ պատասխանէն ու զի՛նքը պիտի գովես: Ո՛հ, ասիկա ընենք քանի որ վստահ ենք թէ Ասիկա հաւատարիմ է իր խոստումը կատարելու ամէն գնով:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ**  
**40.18-31**

Որո՞ւ կը նմանցնէ՞ գԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէ՞:

Կուտֆի՞: Բայց ձուկագործն է որ կուտֆը կը ձուլէ, ու ոսկեքիչը գայն ոսկիով կը պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր համար:

Նմանապէս հիւսնը անփուտ ծառի կոնդ մը կ'անոնէ եւ իր նարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուտֆ մը շինելու:

Այնքան տգէ՞տ է՞, չլսեցի՞՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմքը դրաւ:

Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունտէն ա'յնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ա՛ն է որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ գայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար:

Ինքն է որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ:

Բոյսի մը պէս անոնք հագիւ տնկուած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարդի պէս:

Արդ, «Որո՞ւ կը նմանցնէ՞ զիս, ո՞վ կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը, Աստուած:

Երկինք բարձրացուցէ՞ք ձեր աչքերը եւ դիտեցէ՞ք. ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուններով կը կանչէ: Ա՛յնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ ոեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն:

*Շարունակել  
Աստուածաշունչէն*

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ**  
**ԵՐԱՍՅԵՑԻՆԵՐՈՒՆ**  
**4.16- 5.10**

Այսուհետեւ համարձակօրէն մօտենամք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն ֆահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ զոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Ատոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է զոհ մատուցանէ:

Գիտէ՞ք նաեւ թէ ոեւէ մէկը չի՞ կրնար ինքն իրեն ֆահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուած է որ գայն այդ պաշտօնին կը կանչէ, միշտ ինչպէս Ս.հարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ ֆահանայապետութեան պատիւը, այլ գայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. «Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Դուն յաւիտեան ֆահանայ ես, Մելքիսեղեկ ֆահանային պէս»:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուրէն փրկել:

*ՀԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԷՆ*